

## **Մանրածախ առևտրում հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները**

Համաձայն ՀՀՀՀՍ 2 «Պաշարներ» ստանդարտի՝ կազմակերպությունները նպատակահարմարությունից ելնելով որպես պաշարների ինքնարժեքի չափման մեթոդ կարող են կիրառել ստանդարտ ծախսումների մեթոդը կամ մանրածախ մեթոդը, եթե դրանց արդյունքները մոտավորապես հավասար են ինքնարժեքին:

Երբ առևտրական կազմակերպությունը մանրածախ առևտրում առկա ապրանքների գծով չի կարող իրականացնել քանակագումարային հաշվառում (չկան անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և այլ պայմաններ վերջինիս իրականացման համար), ապա հաշվառումը վարվում է վաճառքի գներով, այսինքն միայն գումարային:

Վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերությունն արտացոլելու նպատակով հաշվապահական հաշվառման մեջ օգտագործվում է 217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն» առաջին կարգի կարգավորող հաշիվը: Քանի որ ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերությունն իրենից ներկայացնում է ոչ միայն ապրանքների վաճառքի գնում ներառված առևտային հավելագինը, այլև անուղղակի հարկերը՝ այս հաշվին կից կարող են բացվել 2171 «Առևտրային հավելագին», 2172 «Ավելացված արժեքի հարկ» և 2173 «Ակցիզային հարկ» երկրորդ կարգի հաշիվները:

Հաշվեկշռում ներառվում է 216 «Ապրանքներ» և 217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն» հաշիվների գումարների տարբերությունը, այսինքն ապրանքների ինքնարժեքն որոշվում է դրանց վաճառքի գնով հաշվարկված արժեքը վաճառքի գնում ներառված հավելագնի արժեքով նվազեցնելու միջոցով:

217 «Ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերություն» հաշվի հաշվառումը ներկայացնենք օրինակով:

Օրինակ. կազմակերպության պահեստից իր ֆիրմային խանութ է մուտքագրվել ապրանք, որի ինքնարժեքն է 10000 դրամ, իսկ վաճառքի գինը սահմանվել է 18000 դրամ, որից առևտրային հավելագինը՝ 5000 դրամ, ԱԱՀ-ը՝ 3000 դրամ ( $(10000 + 5000) * 20\%$ ): Հետևաբար խանութի նյութական պատասխանատուի՝ վաճառողի, նյութական պատասխանատվությունը հաշվապահական հաշվառման գրանցումներում կավելանա 18000 դրամ գումարով:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

|  |                   |
|--|-------------------|
| <b>ԴԲ 2161 «Ապրանքներ մանրածախ առևտրում»</b> | <b>18000 դրամ</b> |
| ԿԲ 2161 «Ապրանքներ պահեստում»                | 10000 դրամ        |
| ԿԲ 2171 «Առևտրային հավելագին»                | 5000 դրամ         |
| ԿԲ 2172 «Ավելացված արժեքի հարկ»              | 3000 դրամ         |

Այդ ապրանքների վաճառքից հետո, վաճառողը 18000 դրամ գումարը մուտքագրում է կազմակերպության դրամարկղ, որ հիման վրա տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

|  |                   |
|--|-------------------|
| <b>ԴԲ 2511 «Ազգային արժույթի դրամարկղ»</b>                                     | <b>18000 դրամ</b> |
| ԿԲ 6112 «Ապրանքների վաճառքից հասույթ»  | 15000 դրամ        |
| ԿԲ 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին՝ ավելացված արժեքի հարկի գծով» | 3000 դրամ         |

2162 «Ապրանքներ մանրածախ առևտրում» հաշվում խանութի վաճառողի գծով ներառված 18000 դրամ գումարը պետք է նվազեցվի՝ թղթակցելով ծախսային հաշվի հետ՝

|  |                   |
|--|-------------------|
| <b>ԴԲ 7112 «Վաճառված ապրանքների ինքնարժեք»</b> | <b>18000 դրամ</b> |
|--|-------------------|

**ԿՐ 2161 «Ապրանքներ մանրածախ առևտրում» 18000 դրամ**

Քանի որ 18000 դրամ գումարը ներառում է առևտրային հավելագինը և ավելացված արժեքի, հետևաբար պետք է կատարվի ծախսի ճանաչված գումարի ճշգրտում:

Ստորնոյով տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

**ԴԲ 7112 «Վաճառված ապրանքների ինքնարժեք» 8000 դրամ**

**ԿՐ 2171 «Առևտրային հավելագին» 5000 դրամ**

**ԿՐ 2172 «Ավելացված արժեքի հարկ» 3000 դրամ**

Իսկ ինչպես հաշվարկել ստորնոյով ձևակերպվող գումարները, եթե քանակային հաշվառման բացակայության պատճառով հնարավոր չէ ուղղակիորեն այն որոշել:

2172 «Ավելացված արժեքի հարկ» հաշվին կրեդիտագրվող գումարը հայտնի է՝ այն կազմում է վաճառված ապրանքների արժեքի 1/6 մասը կամ 16.67 %-ը, իսկ 2171 «Առևտրային հավելագին» հաշվին կրեդիտագրվող գումարը կարելի է որոշել հետևյալ մեթոդով.

Ապրանքների ամսվա սկզբի մնացորդին գումարվում է ամսվա ընթացքում ստացված ապրանքների արժեքը: Այդ գումարը իրենից ներկայացնում է ամսվա ընթացքում խանութում առկա ապրանքների գումարը վաճառքի գներով (**X**):

Ամսվա ընթացքում վաճառված ապրանքների գումարը (**Y**) հարաբերվում է **X** մեծությանը: Այդ հարաբերությունը արտահայտված տոկոսով (**Z**) իրենից կներկայացնի խանութում առկա ապրանքների վաճառքի տեսակարար կշիռը:

Առևտրային հավելագնի ամսվա սկզբի մնացորդին գումարվում է ամսվա ընթացքում ստացված ապրանքների գծով առաջացած առևտրային հավելագինը (**H**) և այն բազմապատկվում է **Z** - ով: Այդ գումարն էլ ստորնոյով կրեդիտագրվում է 2171 «Առևտրային հավելագին» հաշվին:

Ցանկալի է, որպեսզի կազմակերպությունները մանրածախ առևտրում նաև իրականացնեն քանակագումարային հաշվառում և 2162 «Ապրանքներ մանրածախ առևտրում» հաշվում հաշվառումը վարեն ձեռք բերման արժեքով:

**Թաթուլ Մովսիսյան**  
**«Էկոնոմիկա և իրավունք» 5.2000**